ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/09

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Բողոքաբեր՝ «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝

«Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Քոյլոյան, Հ. Ղազարյան

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ՝ Ա. Չերքեզյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով գնանշման հարցում, հանդերձանքի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝

Մասնակից) կողմից 03.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝ վերացնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2020թ.-ի թիվ 4 արձանագրությունը և պարտավորեցնել նույն ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.02.2020թ.-ին և 04.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 06.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 06.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.02.2020թ.-ին:

2. <u>«Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ն 03.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1.ՀՀ Ոստիկանությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 20.12.2019 թվականին հայտարարել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև Ընթացակարգ), իր կարիքների համար՝ հանդերձանքի ձեռքբերման նպատակով:

1.2.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշում է կայացրել հրավիրել բանակցություններ, մասնակիցների կողմից ներկայացված նոր

գնային առաջարկների արդյունքում Ընթացակարգի 12-րդ չափաբաժնով հաղթող է ճանաչվել «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ն (այսուհետ՝ Մասնակից):

1.3.Պատվիրատուն կայացրել և 23.01.2020 թվականին հրապարակել է որոշում Մասնակցի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ և սահմանվել է անգործության ժամկետ:

1.4.Հանձնաժողովը դուրս գալով իր լիազորությունների շրջանակից և կատարելով գործող օրենսդրությամբ սահմանված կարգի խախտում 31.01.2020 թվականին իրականացրեց Հանձնաժողովի նիստ և կայացրեց թիվ 4 արձանագրությունը՝ չեղյալ համարելով Ընթացակարգի թիվ 12 չափաբաժնով իրականացված բանակցությունների արդյունքները և 04.02.2020 թվականին հրավիրեց նոր բանակցությունների: Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի և Ընթացակարգի հրավերի 5.1. կետի պահանջները:

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:(...):

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

4 (...):

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: (...):

6. (...):

Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. (...):

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: (...):

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-ի ա ենթակետի համաձայն՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ

գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները): Նույն կետի 5-ի զ ենթակետի համաձայն՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ՝

- միևնույն գնման առարկայի բնութագրերով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել է առնվազն մեկ գնման մրցակցային ընթացակարգ, որը չկայացած է հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված.

- ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել

անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի 163 հոդվածի համաձայն՝

1. Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողությունները կամ վարքագիծը կամ ակտերը, որոնք սահմանափակում, կանխում կամ արգելում են տնտեսական մրցակցությունը, արգելվում են:

2. Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի՝ տնտեսական մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողություն կամ վարքագիծ է համարվում՝

1) տնտեսվարող սուբյեկտ(ներ)ի նկատմամբ խտրական պայմանների սահմանումը և (կամ) կիրառումը.

2) ձեռնարկատիրական գործունեության արգելումը կամ սահմանափակումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

3) (…):

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել հետևյալը. Ընթացակարգի հրավերը պետք է պարունակի առաջարկվող գնի հաշվարկը, որը առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Մասնակցի հայտում ներկայացված ինքնարժեքից պակաս գնային առաջարկը իրենից ենթադրում է անհամապատասխանություն, որը պետք է արձանագրվի, մեկ աշխատանքային օրով

նիստը կասեցվի և մասնակցին տրամադրվի դրա շտկման համար ժամանակ մինչև կասեցման ավարտը, որը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրականացվող բանակցությունների արդյունքում ներկայացվում են նոր գնային առաջարկներ, ապա դրանցում առկա անհամապատասխանությունները նույնպես ենթակա են շտկման, իսկ չշտկման դեպքում հայտը անբավարար գնահատման և մերժման: Իսկ այն դեպքերում երբ անհամապատասխանություն չի հայտնաբերվել, ապա հայտը գնահատվում է բավարար և կայացվում է պայմանագիր կնքելու որոշում, այն հրապարակվում և անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Այսինքն Օրենսդիրը հստակ սահմանել է այն ընթացակարգը, թե ինչպես պետք է իրականացվեն Հանձնաժողովի գործառույթները հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու պարագայում, որտեղ սահմանված չէ անգործության ժամկետի ընթացքում կամ դրանից հետո Հանձաժողովի կողմից կրկին որևէ գործառույթ իրականացնելու, այդ թվում՝ բանակցություններ հրավիրելու լիազորություն: Իսկ այդպիսի գործողությունների կատարման արդյունքում գործ ունենք հակամրցակցության և գնումներ գործընթացի սկզբունքների խախտման հետ: Հանձնաժողովի կողմից Ընթացակարգի շրջանակում կայացված որոշումները որոնք նախատեսված չեն օրենքով և անմիջական ազդեցություն են ունենում մասնակիցների ձեռնարկատիրական գործունեության սահմանափակմանը կամ խտրական մոտեցմանը հանդիսանում են հակամրցակցային, և իթիվս նշվածի յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է անդրադառնալ իրավիճակային խնդրի կարգավորման նախադեպերին, որպեսզի հնարավոր լինի ապահովել ոչ խտրական մոտեցումը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել, որ հրավերին վերապահված վավերապայմանների ապահովումը պետք է կատարվի Պատվիրատուի կողմից և ՀՀ գնումների մասին 28-րդ հոդվածի խախտման սուբյեկտ չի կարող հանդիսանալ Մասնակիցը և այդ հիմքով Հանձնաժողովի որևէ որոշում առնվազն ոչ իրավաչափ է: Ինչ վերաբերվում է հրավերով նախատեսված պայմանների անհամապատասխանությանը, ապա սույն դեպքում Հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ բանակցությունների արդյունքում 20.01.2020 թվականին ներկայացված նոր գնային առաջարկի վերաբերյալ նման անհամապատասխանություն չի հայտնաբերվել և

հայտը գնահատվել է բավարար, ուստի դրա շտկման անհրաժեշտություն չի եղել և հրավերի 5.1 կետի խախտում չի արձանագրվել և կայացվել է պայմանագիր կնքելու որոշում, որից հետո կրկին անգամ հայտը գնահատելու և նախկին որոշումը չեղարկելու լիազորություն հանձաժողովը չուներ: Ավելին Պատվիրատուի կողմից պետք է 01.02.2020 թվականին ներկայացվեր պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, որը չի կատարվել, այսինքն հանձնաժողովի գործողությունները 31.01.2020 թվականի թիվ 4 արձանագրությամբ հանգեցրել են խտրական և հակամրցակցային որոշումներ կայացնելուն, քանզի հրավերի պահանջներին անհամապատասխան հայտերի առկայության դեպքում առկա պրակտիկայում կասեցվում են Հանձնաժողովի նիստերը և մասնակցին դրանց շտկման հնարավորություն է տրվում, իսկ այս դեպքում իրականացված գործողությունները նույնական չեն պրակտիկային և գործող օրենսդրությանը, որը և ապացուցում է խտրական մոտեցումը և հակամրցակցային սահմանափակումները: Ի դեպ նշվածից զատ հայտնեմ, որ բանակցությունների արդյունքում նոր ներկայացվող գնային առաջարկը իրենից ենթադրում է գնային քաղաքականության վերանայում, որի փոփոխությունը կարող է, ի թիվս այլնի, կատարվել օրինակ. Մասնակցի աշխատողների թվի կրճատման և ապրանքի ինքնարժեքի փոփոխության արդյունքում և նոր գնային առաջարկը դեռևս չի ենթադրում, որ իր մեջ պարունակում է նույն ինքնարժեքը, որը վերաբերվում է նախկին գնային առաջարկին, ուստի չունենալով նոր գնային առաջարկի հաշվարկը և այն որպես անհամապատասխանություն չարձանագրելով Հանձնաժողովի չէր կարող արձանագրել ինքնարժեքի չափը և բնականաբար գնային առաջարկի և ինքնարժեքի հարաբերակցությունը: Ի վերջո հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողը չունենալով բանակցությունների արդյունքները չեղարկելու լիազորություն, 31.01.2020 թվականի թիվ 4 արձանագրությամբ նշված ենթադրյալ իրավական հիմքերի մատնանշմամբ թույլ է տվել օրենսդրորեն չպատճառաբանված և լիազորությունների սահմանազանցմամբ գործողություններ, որոնք հանգեցրել են Մասնակցի իրավունքների անօրինական սահմանափակմանը: Հանձնաժողովի կողմից 23.01.2020 թվականին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշումը, որի հիմքով այլ գործառույթ իրականացնել քան Մասնակցին՝ 01.02.2020 թվականին, պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ ներկայացնելը առկա չէ, սակայն սույն դեպքում Պատվիրատուի կողմից չի ներկայացվել պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ: Իսկ Հանձնաժողովի 31.01.2020 թվականի թիվ 4 արձանագրությունից հետո վերոգրյալի

վերաբերյալ 01.02.2020 թվականին Հանձնաժողովին հայտնել եմ գրավոր դիրքորոշում, որը մինչ այս մնացել է անարձագանք:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ վերացնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2020թ.-ի թիվ 4 արձանագրությունը և պարտավորեցնել նույն ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.02.2020թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը՝ հնարավորություն տալով «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի կողմից 03.02.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով 06.12.2019թ.-ին հրապարակվել է ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1 ծածկագրով գնանշման հարցում /այսուհետ՝ ընթացակարգ/: Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 18.12.2020թ.-ին, իսկ բանակցություններ նշանակվել են 20.01.2019թ.-ին:

Ընթացակարգը հայտարարվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված հրավերի օրինակելի ձևի վերջին փոփոխություններով, որն իրենից ենթադրում է այսպես ասած միափուլ մրցույթ, այսինքն, մասնակցի որակավորումը գնատահվում է հայտերի բացման նիստի ժամանակ: Այսպիսով ոչ գնային պայմաններով բավարար գնահատված մասնակիցները հրավիրվել են միաժամանակյա բանակցությունների /հիմք Ընթացակարգի հրավերի 8.7 կետի Բ ենթակետ/: Բանակցությունների ժամանակ ներկա բոլոր մասնակիցները տեղեկացվել են, որ հրավերի 5.1 կետի և գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին, այսինքն՝ բանակցությունների ժամանակ գնային առաջարկի նվազեցումներն իրականացվելու են առավելագույնը մինչև հայտով ներկայացված

ինքնարժեք: Սակայն «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի կողմից գնային առաջարկները նվազեցվել են հայտով ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքից ցածր: Գնահատող հանձնաժողովի կողմից 30.01.2020թ.-ին նկատելի է դարձել, որ «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի կողմից 12-րդ չափաբաժնի մասով բանակցությունների ընթացքում գնային առաջարկի նվազեցումը կատարվել է հայտով ներկայացված ինքնարժեքից ցածր և հրավիրելով նիստ՝ արձանագրվել; է, որ 12-րդ չափաբաժնի շրջանակներում իրականացված բանակցությունները համարել չեզյալ, և այդ չափաբաժնի մասով հրավիրել նոր բանակցություններ, բոլոր մասնակիցներին նախորոք ծանուցելով դրա վերաբերյալ:

Գնումների գործընթացի կազմակերպման մասին 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ պարբերության պահանջների համաձայն յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը: ''Նորմատիվ իրավական ակտերի մասին'' ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակող բառերի և տառերի արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից: Գնումների գործընթացի կազմակերպման մասին 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների համաձայն մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Քանի որ Ընթացակարգի հրավերի օրինակելի ձևով գնային առաջարկը պահանջվում է ներկայացնել ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, ուստի այս պարագայում մասնակցի կողմից ներկայացված հայտով բացահայտվում է գնման առարկայի ինքնարժեքը: Պատվիրատուն որպես հիմք ընդունում է մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի հաշվարկը, քանի որ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը թույլ չի տալիս մասնակցից պահանջել այլ փաստաթղթեր, որոնցով

կներկայացվի ինքնարժեքի հաշվարկը: Ուստի որպես գնման առարկայի ինքնարժեք ընդունվում է հայտով ներկայացված գինը: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու միայն մեկ հայտ, որն իր մեջ բացի մյուս պահանջվող փաստաթղթերից ներառում է թվով մեկ գնային առաջարկ: Իսկ ինքնարժեք փոխելուց փոխվում է նաև տվյալ մասնակցի հայտով ներկայացված գնային առաջարկը, փաստացի ստացվում է որ մասնակիցը հայտով երկու գնային առաջարկ է ներկայացնում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված 21.01.2020թ.-ին և 05.02.2020թ-ին հարցումները /կցվում են, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված բանավոր հարցման արդյունքում հստակ պարզաբանումն այս հարցի վերաբերյալ ևս մեկ անգամ հստակեցնում է այն փաստը, որ գնային առաջարկի նվազեցումներ կատարվում են միայն շահույթից:

Բացի դա 03.02.2020 թվականին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/01, ԳԲՔԱ-ՆԳ-2020/04 և ԳԲՔԱ-ՆԳ-2020/06 որոշումներով ևս հաստատվեց այն փաստը, որ գնային առաջարկի նվազեցումներ կատարվում են մինչև հայտով ներկայացված ինքնարժեքը:

ՀՀ ոստիկանությունը գտնում է, որ «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի կողմից բանակցությունների ժամանակ իջեցված գնային առաջարկի չեղարկումը իրավաչափ է, քանի որ տվյալ ընթացակարգի շրջանակներում պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության բոլոր պահանջները և խնդրում է չբավարարել Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ընթացակարգի թիվ 12-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ն:

«Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ հայտնելով, որ ուսումնասիրել է « ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
12	Ամենօրյա կոշկեղեն /կոշիկ սև/	5 335 000	1 072 000	0	6 407 000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8.7 կետի «բ» ենթակետը, Հանձնաժողովը որոշել է բոլոր մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

Հանձնաժողովի 20.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ն առաջարկել է պայմանագիրը կատարել 4 652 600 ՀՀ դրամով, ինչ արդյունքում թիվ 12-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի 31.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 20.01.2020թ.-ի բանակցությունների ժամանակ, գնահատող հանձնաժողովի անուշադրության արդյունքում թիվ 12-րդ չաւիաբաժնով տեղի է ունեցել վրիպակ, որի պատճառով տեղի է ունեցել գնային առաջարկի ինքնարժեքից ցածր նվազեցում, որը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի և հրավերի 5.1-րդ կետի պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է չեղյալ համարել թիվ 12-րդ չաւիաբաժնով բանակցության արդյունքները և մասնակիցների հավասար իրավունքներն ապահովելու համար բոլոր մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի կողմից 03.02.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված

տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ Առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, որոնցով սահմանվել են, որ այն պետք է բաղկացած լինի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ոստիկանության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ընթացակարգի թիվ 12-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ն:

«Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝ հայտնելով, որ ուսումնասիրել է « ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, որի արդյունքում առաջարկել է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
12	Ամենօրյա կոշկեղեն /կոշիկ սև/	5 335 000	1 072 000	0	6 407 000

Հանձնաժողովի 27.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8.7 կետի «բ» ենթակետը, Հանձնաժողովը որոշել է բոլոր մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

Հանձնաժողովի 20.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ն առաջարկել է պայմանագիրը կատարել 4 652 600 ՀՀ դրամով, ինչ արդյունքում թիվ 12-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի 31.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 20.01.2020թ.-ի բանակցությունների ժամանակ, գնահատող հանձնաժողովի անուշադրության արդյունքում թիվ 12-րդ չաւիաբաժնով տեղի է ունեցել վրիպակ, որի պատճառով տեղի է ունեցել գնային առաջարկի ինքնարժեքից ցածր նվազեցում, որը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի և հրավերի 5.1-րդ կետի պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է չեղյալ համարել թիվ 12-րդ չաւիաբաժնով բանակցության արդյունքները և մասնակիցների հավասար իրավունքներն ապահովելու համար բոլոր մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է 5 335 000 ՀՀ դրամ: Սակայն 20.01.2020թ.-ին տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Մասնակիցը իր ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել է ոչ միայն նույն գնային առաջարկով ներկայացրած շահույթից, այլ նաև՝ արդեն հստակ նախատեսված ինքնարժեքից, որի արդյունքում «Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 4 652 600 ՀՀ դրամ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020- ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով մասնակցի հայտը՝ գործել է իրավաչափ՝ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հրավերի 5.1-րդ կետը, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունի նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարը, իսկ այդ փաստը Հանձնաժողովը պետք է գնահատի որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժի մասնակցի ներկայացրած հայտը:

Հակառակ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ կխախտվեն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չեղյալ համարելով թիվ 12-րդ չափաբաժնով բանակցության արդյունքները և հրավիրելով բանակցությունների՝ գործել է իրավաչափ,

ապահովելով մասնակիցների հավասար իրավունքներն՝ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և Հրավերի 5.1-րդ կետերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Պետրոս Ղարագյոզյան Միսակի» Ա/Ձ-ի կողմից 03.02.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/09 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**